



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№՝ 1019-Ա/Ք

«17» 10. 2014թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

6-02.10.02 «ՊԱՐՏԵԶՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 6-02.10.02.01-3

«ԱՅԳԵՊԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. օգոստոսի 10-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների նախագծերի փորձաքննություն իրականացնող ոլորտային հանձնաժողովների անվանական կազմը հաստատելու մասին» N 777-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման

պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2015թ. սեպտեմբերի 1-ից:

3. Նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությանը. մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման պետական կրթական չափորոշիչը:

4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/. ապահովել չափորոշի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:

5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:



ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2014թ . 10_ի 17 -ի
N 1019-Ա/Ք -Ն հրամանի

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

**6-02.10.02 «ՊԱՐՏԵԶՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 6-02.10.02.01-3 «ԱՅԳԵՊԱՆ»
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 3-րդ մակարդակի 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվաճուրդի նվազագույն և առավելագույն ծավալները:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝

- 1) առկա
- 2) դրսեկության (էքստենսատ)
- 3) հեռավար (դիստանցիոն)

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

- 1) կրթության առկա ձևով՝

ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 1 տարի,

բ. հիմնական կրթության հիմքով առանց միջնակարգ կրթություն երրորդ աստիճանի կրթական ծրագրի՝ 1 տարի,

գ. հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում՝ 3 տարի:

2) դրսեկության (էքստենսատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի N 1028-Ն որոշման:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով և հիմնական կրթության հիմքով՝ առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրն ուսումնառող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 1332 ժամ է, առավելագույն ծավալը՝ 2160 ժամ: Հիմնական կրթական ծրագիրը հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 104 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 6-02.10.02 «ՊԱՐՏԵԶՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 6-02.10.02.01-3 «ԱՅԳԵՊԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները.

- 1) Այգեպան (այգեգործ)
- 2) Պարտիզպան

7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորմամբ մասնագետի մասնագիտական գործունեության պարտականություններն են.

- 1) այգում կատարել նախապատրաստական աշխատանքներ ոչ բարդ ռելիեֆային ձևավորումներ իրականացնելու նպատակով,
- 2) տնկել ծառեր, թփեր, ցանել ծաղիկներ՝ ձևավորել կանաչ տարածքներ և կատարել դրանց խնամքի և պահպանության աշխատանքները,
- 3) կատարել ծառերի պատվաստում,
- 4) իրականացնել ագրոտեխնիկական միջոցառումներ,
- 5) իրականացնել պայքար վնասատուների և հիվանդությունների դեմ,
- 6) մաքրել ու բարեկարգել այգին,
- 7) կազմակերպել բերքահավաք, նախապատրաստվել ձմեռացման:

ԳԼՈՒԽ 3

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 6-02.10.02 «ՊԱՐՏԵԶՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 6-02.10.02.01-3 «ԱՅԳԵՊԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում է շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագիրն ավարտած շրջանավարտը պետք է.

- 1) ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորման պահանջներին համապատասխան ունենա ազգային և համաշխարհային մշակույթի ու պատմության վերաբերյալ գիտելիքներ,
- 2) ունենա մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, կարողանա դրանք կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում,
- 3) մասնագիտական գործիքները, սարքավորումները, հարմարանքները և նյութերը արդյունավետ և նպատակային օգտագործելու նպատակով կիրառի մասնագիտական տեսական ու գործնական գիտելիքները,

4) ունենա մասնագիտական գործողությունները գործող նորմաների սահմաններում իրականացնելու հմտություններ,

5) ճիշտ ընկալի և կիրառի մասնագիտական տերմինաբանությունը,

6) ունենա մասնագիտական գործունեության ժամանակ համապատասխան գործողությունների սոցիալական հետևանքները հաշվի առնելու հմտություն,

7) ունենա մասնագիտական ինքնազարգացման և կատարելագործման նպատակով անհրաժեշտ տեղեկությունները ընտրելու և մասնագիտական աղբյուրներից ձեռք բերելու հմտություն,

8) ցուցաբերի աշխատանքային խնդիրների լուծման ընթացքում պատասխանատվություն ստանձնելու, հիմնավորված լուծումներ գտնելու կարողություն,

9) ունենա ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում աշխատելու հմտություն:

ԳԼՈՒԽ 4

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 6-02.10.02 «ՊԱՐՏԵԶՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 6-02.10.02.01-3 «ԱՅԳԵՊԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1) ցուցաբերի ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ իրավական ակտերի հիմնական դրույթների իմացություն,

2) տիրապետի հայոց լեզվին,

3) հաղորդակցվի առնվազն մեկ օտար լեզվով,

4) ցուցաբերի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին տիրապետելու կարողություն,

5) ցուցաբերի ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,

6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7) տիրապետի էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությանը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթներին,

8) ցուցաբերի մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ իմացություններ,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի հավելված 1-ի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով ներկայացված առանցքային հմտություններին:

13. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի հավելված 1-ի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ներկայացված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 6-02.10.02 «ՊԱՐՏԵԶՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 6-02.10.02.01-3 «ԱՅԳԵՊԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագիր

իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

2) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացման ուսումնամեթոդական ապահովման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների

բ. Օտար լեզվի

գ. Իրավունքի հիմունքների

դ. Այգեգործական սարքավորումների

ե. Տարածքի կանաչապատման

զ. Բնապահպանության

է. Ագրոնոմիայի

ը. Աշխատանքի անվտանգության

թ. Անհատական համակարգիչների

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. Պատվաստման աշխատանքների

բ. Ջերմոց

գ. Բույսերի պաշտպանության, հիվանդությունների և հողի ախտորոշման

3) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ:

17. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման դեպքում սահմանվում է ուսումնական պլաններով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,

6) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ.

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները.

4) ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում.

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի ձեռք բերած կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 6-02.10.02 «ՊԱՐՏԵԶՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 6-02.10.02.01-3 «ԱՅԳԵՊԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով հավելված 1-ի 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է որակավորման նկարագրին համապատասխան դրա ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման պետական կրթական չափորոշիչի

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

1. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»		
1.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-3-14-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների

		իրականացման համար
7.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողություններ համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
8.	Ուսումնառության արդյունք 2	իրառելի ուղղակի հաղորդակցման ձևերը
9.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
10.	Ուսումնառության արդյունք 3	Կիրառելի անուղղակի հաղորդակցման ձևերը
11.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
12.	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
13.	Կատարման չափանիշներ	1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստատարի:

		<p>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</p> <p>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
14.	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
15.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
3. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
16.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-3-14-001
17.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ
18.	Մոդուլի տևողությունը	36 ժամ

19.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
20.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
21.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
22.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
23.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
24.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն) 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները,
25.	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
26.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային

		ձևակերպումների կարգը:
27.	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
28.	Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</p> <p>2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</p> <p>3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</p> <p>4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</p> <p>5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</p> <p>6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կտրվածքների դեպքում,</p> <p>7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:</p>
4. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
29.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-3-14-001
30.	Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
31.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
32.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
33.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
34.	Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք

35.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,</p> <p>2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական, աշխատատեղ(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,</p> <p>3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),</p> <p>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,</p> <p>5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</p>
36.	Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
37.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,</p> <p>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</p> <p>3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</p> <p>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</p> <p>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</p>
38.	Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
39.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</p> <p>2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</p> <p>4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</p> <p>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</p>
40.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները

41.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</p>
5. ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»		
42.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-3-14-001
43.	Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները</p>
44.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
45.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
46.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
47.	Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
48.	Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,</p> <p>2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման</p>

		<p>սարք և այլն),</p> <p>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</p>
49.	Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
50.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</p> <p>3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</p> <p>4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:</p>
51.	Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
52.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք,</p> <p>2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,</p> <p>3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն),</p> <p>4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,</p> <p>5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:</p>
53.	Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
54.	Կատարման չափանիշներ	<p>1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,</p> <p>2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>3) գծագրում է կանոնավոր պատկերներ,</p>

		<p>4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</p> <p>5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</p> <p>6) զծագրում է տեքստային բլոկներ,</p> <p>7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</p>
55.	Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
56.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,</p> <p>2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</p> <p>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</p> <p>4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</p> <p>5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</p>
57.	Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում
58.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է « համացանց » հասկացությունը,</p> <p>2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,</p> <p>3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</p> <p>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</p> <p>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</p> <p>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):</p>

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 «Պարտեզպուրակային գործ» մասնագիտության 6-02.10.02.01-3 «Այգեպան» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

1. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ»		
1.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-001
2.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է սովորողներին ծանոթացնել այգեգործական գործիքների, փոքրածավալ մեքենաների և սարքավորումների հետ և դրանց օգտագործման կարողություններ ձևավորել:
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Ճանաչել այգեգործական աշխատանքներում օգտագործվող գործիքները և սարքավորումները
7.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում այգեգործական գործիքների ու սարքավորումների տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում այգեգործական գործիքների ու սարքավորումների կառուցվածքը, նշանակությունը և կարևորությունը, 3) տարբերակում է այգեգործական աշխատանքներում օգտագործվող գործիքների և սարքավորումների տեսակները:
8.	Ուսումնառության արդյունք 2	Օգտագործել հող մշակող գործիքներն ու սարքավորումները

9.	Կատարման չափանիշներ	<p>1) գիտի և ճիշտ է ներկայացնում այգիներում կատարվող հողային աշխատանքների առանձնահատկությունները,</p> <p>2) տիրապետում է հող փորելու և փխրեցնելու գործիքներով ու սարքավորումներով աշխատելու հմտություններին,</p> <p>3) տիրապետում է հողը մաքրելու և հարթեցնելու գործիքներով աշխատելու հմտություններին,</p> <p>4) ճիշտ է խնամում, մաքրում և պահպանում հող մշակող գործիքները, մեքենաներն ու սարքավորումները,</p> <p>5) պահպանում է հող մշակող գործիքներով աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
10.	Ուսումնառության արդյունք 3	Օգտագործել ծառերի ու թփերի էտի ու ձևավորման գործիքներն ու սարքավորումները
11.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բնութագրում ծառերի ու թփերի էտի ու ձևավորման գործիքներն ու սարքավորումները,</p> <p>2) ճիշտ է աշխատում ծառերի ու թփերի էտի գործիքներով ու սարքավորումներով,</p> <p>3) ճիշտ է աշխատում ծառերի ու թփերի ձևավորման գործիքներով,</p> <p>4) ճիշտ է խնամում, մաքրում և պահպանում ծառերի ու թփերի էտի ու ձևավորման գործիքները, մեքենաներն ու սարքավորումները,</p> <p>5) պահպանում է ծառերի և թփերի էտի ու ձևավորման գործիքներով աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
12.	Ուսումնառության արդյունք 4	Օգտագործել խոտհնձիչ գործիքները, մեքենաներն ու սարքավորումները
13.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բնութագրում խոտհնձիչ գործիքները, մեքենաներն ու սարքավորումները,</p> <p>2) ճիշտ է գործարկում խոտհնձիչ գործիքները, մեքենաներն ու սարքավորումները</p> <p>3) ճիշտ է կարգավորում խոտհնձիչ մեքենայի ռեժիմները,</p> <p>4) ճիշտ է խնամում, մաքրում և պահպանում խոտհնձիչ գործիքները, մեքենաներն ու սարքավորումները,</p> <p>5) պահպանում է խոտհնձիչ գործիքներով, մեքենաներով ու սարքավորումներով աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
14.	Ուսումնառության արդյունք 5	Օգտագործել այգու բուժման և կանխարգելման սրսկիչները
15.	Կատարման չափանիշներ	1) տարբերակում է սրսկիչների տեսակները,

		<p>2) սրսկիչները ճիշտ է լիցքավորում համապատասխան լուծույթներով,</p> <p>3) ճիշտ է գործարկում և աշխատում սրսկիչներով՝ յուրաքանչյուր բուսատեսակին համապատասխան,</p> <p>4) ճիշտ է խնամում, մաքրում, վնասագերծում և պահպանում սրսկիչները,</p> <p>5) սրսկիչներով աշխատելիս պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
16.	Ուսումնառության արդյունք 6	Գործարկել ոռոգման սարքավորումները
17.	Կատարման չափանիշներ	<p>1) տարբերակում է ոռոգման սարքավորումների տեսակները,</p> <p>2) ճիշտ է տեղաբաշխում սարքավորումները՝ ըստ ոռոգման աղբյուրի դիրքի,</p> <p>3) ճիշտ է պատրաստում ոռոգման սարքավորումներն օգտագործման համար,</p> <p>4) կարողանում է կարգավորել ջրի շիթի ուժը՝ ըստ անհրաժեշտության կամ ըստ բուսատեսակների՝ ջրի նկատմամբ ունեցած պահանջարկի,</p> <p>5) սահմանված կարգով խնամում, հավաքում և պահեստավորում է սարքավորումները:</p> <p>6) ոռոգման սարքավորումներով աշխատելիս պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
2. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԸ»		
18.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-002
19.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողների մոտ ձևավորել տարբեր գոտիների այգիներում տարածված մշակաբույսերը, դրանց կազմությունն ու բազմացման առանձնահատկությունները տարբերակելու կարողություններ:
20.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
21.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
22.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
23.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել այգիներում մշակվող պտղատու ծառատեսակները, դրանց կենսաբանական առանձնահատկությունները, բազմացման եղանակները

24.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում բուսական աշխարհի զարգացման օրինաչափությունները, ծառերի կառուցվածքը, տարեկան հասակային շրջանները և կյանքի պայմանները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում այգիներում մշակվող հնդավոր ծառատեսակները, դրանց կառուցվածքը, բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում այգիներում մշակվող կորիզավոր ծառատեսակները, դրանց կառուցվածքը, բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում այգիներում մշակվող ընկուզավոր ծառատեսակները, դրանց կառուցվածքը, բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում այգիներում մշակվող չոր մերձարևադարձային բույսերը, դրանց կառուցվածքը, բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում այգիներում մշակվող այլ պտղատու ծառերը, դրանց կառուցվածքը, բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները:</p>
25.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել այգիներում մշակվող հատապտղատու թփերը, դրանց կենսաբանական առանձնահատկությունները, բազմացման եղանակները
26.	Կատարման չափանիշներ	ճիշտ է ներկայացնում հատապտղատու թփերի կառուցվածքը, զարգացման փուլերը և կյանքի պայմանները, ճիշտ է ներկայացնում հատապտղատու թփերի բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները, տարբերակում է այգիներում մշակվող հատապտղատու թփերի տեսակները:
27.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել այգիներում մշակվող դեկորատիվ բույսերը, դրանց կենսաբանական առանձնահատկությունները, բազմացման եղանակները
28.	Կատարման չափանիշներ	<p>իշտ է ներկայացնում այգիներում մշակվող դեկորատիվ ծառատեսակները, դրանց կառուցվածքը, կյանքի պայմանները, բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները,</p> <p>իշտ է տարբերակում այգիներում մշակվող դեկորատիվ ծառատեսակները,</p> <p>իշտ է ներկայացնում այգիներում մշակվող դեկորատիվ թփերը, դրանց կառուցվածքը, կյանքի պայմանները, բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները,</p>

		իշտ է տարբերակում այգիներում մշակվող դեկորատիվ թփերը:
29.	Ուսումնառության արդյունք 4	Տարբերակել այգիներում մշակվող ծաղկաբույսերը, դրանց կենսաբանական առանձնահատկությունները, բազմացման եղանակները
30.	Կատարման չափանիշներ	ճիշտ է ներկայացնում այգիներում մշակվող ծաղկատեսակների կառուցվածքը և կյանքի պայմանները, ճիշտ է ներկայացնում այգիներում մշակվող ծաղկատեսակների բազմացման եղանակներն ու առանձնահատկությունները, ճիշտ է տարբերակում այգիներում մշակվող ծաղկատեսակները:
3. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՅԳՈՒ ՀՈՂԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ»		
31.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-003
32.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի աճեցման համար հողի նախապատրաստման աշխատանքներ կատարելու կարողություններ ձևավորել:
33.	Մոդուլի տևողությունը	24 ժամ
34.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում» մոդուլները:
35.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
36.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել հողերի տեսակները՝ ըստ դրանց առանձնահատկությունների
37.	Կատարման չափանիշներ	1) կատարում է հողի կառուցվածքային վերլուծություն, ճիշտ է բնութագրում և ցույց տալիս հողերի շերտերը, 2) տարբերակում է հողերի տեսակները, ճիշտ է ներկայացնում դրանց էական առանձնահատկությունները:
38.	Ուսումնառության արդյունք 2	Ընտրել հողի տվյալ տեսակին առավել համապատասխան մշակման միջոցը, կատարել հողի մաքրում, փորում, փխրեցում, հարթեցում
39.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողը փորելու, փխրեցնելու գործողության նշանակությունը այգու մշակման համար, 2) ճիշտ է տարբերակում հողի հասունացման վիճակը, պահպանում է հողի մշակման ժամկետները,

		<p>3) հողը փորում, փխրեցնում, հարթեցնում է՝ պահպանելով մշակման կանոնները, անհրաժեշտության դեպքում օգտագործում է հողի մշակության գործիքներ, մեքենաներ և սարքավորումներ,</p> <p>4) ճիշտ է կատարում հողի նախացանքային նախապատրաստումը (ակոսների, մարգերի տեղաձևում, ջրատար առուների փորում, մաքրում)՝ յուրաքանչյուր մշակաբույսի տնկման սխեմայի և սնման մակերեսին համապատասխան,</p> <p>5) աշխատելիս պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
40.	Ուսումնառության արդյունք 3	Պատրաստել տարբեր հողախառնուրդներ՝ ըստ բուսատեսակի ու հետագա օգտագործման նպատակի
41.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում հողախառնուրդների օգտագործման նպատակը և անհրաժեշտությունը,</p> <p>2) պատրաստում է տարբեր բաղադրության հողախառնուրդներ՝ ըստ բուսատեսակի և նշանակության:</p>
42.	Ուսումնառության արդյունք 4	Իրականացնել հողի էոզոլոգիայի դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ
43.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում դաշտապաշտպան շերտերի և դարավանդների դերն ու նշանակությունը հողի էոզոլոգիայի դեմ պայքարի գործում,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ցանքաշրջանառության ճիշտ կազմակերպման դերն ու նշանակությունը հողի էոզոլոգիայի դեմ պայքարի գործում,</p> <p>3) ճիշտ է ընտրում հողի վարի ուղղությունը, ճիշտ է կատարում ակոսների, առուների և մարգերի տեղաձևումը, ճիշտ է ընտրում ոռոգման ջրի քանակը,</p> <p>4) ճիշտ է ընտրում պարարտանյութերի և թունաքիմիկատների չափաքանակները (շրջակա միջավայրի անվտանգության նկատառումներով):</p> <p>5) ճիշտ է իրականացնում հողի էոզոլոգիայի դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները:</p>
4. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱՆԱՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»		
44.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-004
45.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է այգիներում պարզ կառույցների պատրաստման, այգու ձևավորման, սիզամարգերի ու ծաղկանոցների հիմնադրման, այգու բնական կանաչ տարածքների և սիզամարգերի հարդարման

		կարողություններ ձևավորել:
46.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
47.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում», ՊԳ-Ա-3-14-002 «Այգիներում մշակվող բուսատեսակներ» , ՊԳ-Ա-3-14-003 «Այգու հողերի գյուղատնտեսական մշակում» մոդուլները:
48.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
49.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել այգիների փոքր կառույցների, կանաչ տարածքների, ծաղկանոցների տեսակները
50.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում այգիների փոքր կառույցների, կանաչ տարածքների, ծաղկանոցների տեսակները, դրանցից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը 2) ճիշտ է բացատրում դարավանդների նշանակությունը և տիպերը, 3) ճիշտ է ներկայացնում ծառուղիների դերը և տիպերը, 4) ճիշտ է տարբերակում այգիներում բնական կանաչ տարածքների, սիզամարգերի, ծաղկանոցների, ծաղկային օջախների տեսակները, 5) ճիշտ է բացատրում այգիներում, պարտեզներում ջրային մակերեսների դերն ու նշանակությունը, 6) ճիշտ է բացատրում ջրահեռացման առուների, դրենաժների անհրաժեշտությունը, 7) տարբերակում է այգիների ձևավորման ժամանակ օգտագործվող փոքր կառույցների տեսակները:
51.	Ուսումնառության արդյունք 2	Ըստ տեղանքի պայմանների ստեղծել և ձևավորել դարավանդներ
52.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ըստ տեղանքի պայմանների ճիշտ է ընտրում դարավանդի տեսակը, 2) ըստ տեղանքի պայմանների և ըստ նպատակի ճիշտ է ընտրում կառուցապատման նյութը (փայտ, բետոն, քար և այլն), 3) ճիշտ է կատարում դարավանդի համար չափումներն ու հաշվարկները, 4) դարավանդի ձևավորումը և հարդարումը կատարում է տեղանքին ներդաշնակ:

53.	Ուսումնառության արդյունք 3	Կառուցել և ձևավորել ծառուղիներ
54.	Կատարման չափանիշներ	<p>1) այգու դիրքին համապատասխան ճիշտ է ընտրում ծառուղիների ուղղությունները,</p> <p>2) ծառուղիների արահետների կառուցապատման համար օգտագործման նպատակին համապատասխան ճիշտ է նախապատրաստում հիմքը,</p> <p>3) ճիշտ է ընտրում նյութը և ճիշտ է ձևավորում ծառուղիների արահետի եզրաշերտը,</p> <p>4) ճիշտ է ընտրում ծառուղիների արահետի ծածկանյութը և ճիշտ է ձևավորում,</p> <p>4) ճիշտ է պահպանում և վերանորոգում ծառուղիները:</p>
55.	Ուսումնառության արդյունք 4	Ստեղծել սիզամարգեր, կանաչ պարիսպներ
56.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է նախապատրաստում հողը սիզամարգերի համար, ճիշտ է կատարում սերմերի ցանքը՝ ապահովելով հավասարաչափ ծածկույթ,</p> <p>2) ճիշտ է խնամում սիզամարգերը՝ պահպանելով խոտածածկույթով ճանապարհների խնամքի չափանիշներն ու կանոնները,</p> <p>3) ճիշտ է կազմակերպում սիզամարգերի՝ կտրվածքով համահարթեցման և ոռոգման աշխատանքները,</p> <p>4) ճիշտ է կատարում ուղղահայաց կանաչապատման համար բուսատեսակների ընտրությունը,</p> <p>5) ճիշտ է կազմակերպում լիաների՝ փաթաթվող բույսերի ամրացումը տարբեր տեսակի հենարանների վրա,</p> <p>6) ճիշտ է կազմակերպում կանաչ ցանկապատների խնամքը՝ հաշվի առնելով դիրքը:</p>
57.	Ուսումնառության արդյունք 5	Ստեղծել ծաղկանոցներ, ծաղկաթմբեր, ծաղկային օջախներ
58.	Կատարման չափանիշներ	<p>1) ստեղծում է ծաղկանոցներ, ծաղկաթմբեր, ծաղկային օջախներ՝ ինչպես նոր կառուցվող, այնպես էլ արդեն կանաչապատված տարածքներում,</p> <p>2) ճիշտ է աշխատում ցանովի և սածիլվող (թաղարային) ծաղիկների տարբեր տեսակների հետ, ճիշտ է կատարում ծաղիկների ցանքը և սածիլումը,</p> <p>3) ճիշտ է ձևավորում ծաղկանոցներն ու ծաղկաթմբերը՝ ընտրելով շրջապատի հետ ներդաշնակ նյութեր, գույներ և ձևեր,</p> <p>4) ճիշտ է ընտրում ծաղկանոցների, ծաղկաթմբերի համար ծաղիկների տեսակները,</p>

		5) տեղանքին և նպատակին համապատասխան ճիշտ է ձևավորում, հարդարում և խնամում ծաղկանոցներն ու ծաղկաթմբերը:
59.	Ուսումնառության արդյունք 6	Կառուցել փոքրիկ ջրամբարներ, արհեստական ջրվեժներ, ջրահեռացման առուներ
60.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում ջրահեռացման տիպը՝ հաշվի առնելով տեղանքը (ինքնահոս առու, մեխանիկական եղանակներ),</p> <p>2) կառուցում է ջրահեռացման առուներ՝ ճիշտ ընտրելով դրանց ուղղությունը,</p> <p>3) ճիշտ է կատարում այգում կառուցվող ջրավազանների, փոքրիկ ջրվեժների հիմքային նախապատրաստական աշխատանքները՝ հաշվի առնելով դիրքը, տարողությունը և ամրությունը,</p> <p>4) ճիշտ է կատարում կառուցապատման նյութի ընտրությունը՝ ըստ ավազանի տարողության,</p> <p>5) ճիշտ է կառուցում ջրային ավազանները, ջրվեժները,</p> <p>6) ջրային մակերեսները ձևավորում է այգու տարածքին ներդաշնակ,</p> <p>7) ապահովում է ջրային մակերեսների համապատասխան խնամքի և մաքրման աշխատանքները:</p>
5. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՆԿԻՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ»		
61.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-005
62.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել այգիներ հիմնելու համար ծառերի և թփերի սերմերի, կտրոնների, տնկանյութի նախապատրաստման կարողություններ հմտություններ:
63.	Մոդուլի տևողությունը	40 ժամ
64.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում», ՊԳ-Ա-3-14-002 «Այգիներում մշակվող բուսատեսակներ», ՊԳ-Ա-3-14-003 «Այգու հողերի գյուղատնտեսական մշակում» մոդուլները:
65.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

66.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել ծառափայլին բույսերի բազմացման մեթոդները
67.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ծառափայլին բույսերի տեսակները, կառուցվածքը, տարածման առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում ծառափայլին բույսերի բազմացման կանոններն ու մեթոդները, 3) ճիշտ է տարբերակում ծառափայլին բույսերի բազմացման մեթոդները:
68.	Ուսումնառության արդյունք 2	Նախապատրաստել հողը տնկարանային տնտեսության համար
69.	Կատարման չափանիշներ	հողը պարատացնելու համար ճիշտ է ընտրում պարարտանյութերի տեսակը (օրգանական և հանքային) և չափաքանակները, հողը վարում է, հարթեցնում և տեղաձևում՝ ըստ մշակաբույսերի տեսակների, ընտրում ջրատար առուների տեղաբաշխումն ու ուղղությունը:
70.	Ուսումնառության արդյունք 3	Նախապատրաստել ծառերի ու թփերի սերմերն ու կտրոնները ցանքի կամ տնկման համար
71.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բաժանում դուստր թփերը և արմատակալեցնում, 2) ընտրում է տեսակավորված, առողջ, թարմ կոնդիցիոն սերմեր, 3) ճիշտ է կատարում նախացանքսային մշակումը, նախասածիլումն ու ցանքը, 4) կարողանում է արմատակալեցնել կանաչ կտրոնները՝ ավազի, պեռլիտի, ջրի, հողի մեջ՝ օգտագործելով նաև աճի խթանիչներ:
72.	Ուսումնառության արդյունք 4	Նախապատրաստել պատվաստակալներն ու տնկիները
73.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կազմակերպում պատվաստակալների և տնկիների մոլախոտերի հեռացումը, քաղհան-փխրեցումը, բուկլիցը և ոռոգումը, 2) ճիշտ է կատարում պատվաստակալների և տնկիների ձևավորումը, 3) ճիշտ է կատարում պատվաստակալների ու տնկիների նախապատրաստական աշխատանքները:
74.	Ուսումնառության արդյունք 5	Կատարել պատվաստում
75.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պատվաստման դերը բուսատեսակների պահպանման և տեսակային հատկանիշների բարելավման գործում,

		<p>2) ճիշտ է ներկայացնում պատվաստում կատարելու քայլերի հաջորդականությունը և ժամկետները,</p> <p>3) ճիշտ է բացատրում պատվաստումների տեսակների առանձնահատկությունները,</p> <p>4) ճիշտ է կատարում աչքապատվաստը՝ պահպանելով նախապատրաստման և պատվաստի տեխնոլոգիան, խնամքի կանոնները,</p> <p>5) ճիշտ է կատարում կտրոնապատվաստը՝ պահպանելով նախապատրաստման և պատվաստի տեխնոլոգիան, խնամքի կանոնները,</p> <p>6) ճիշտ է կատարում ճեղապատվաստը՝ պահպանելով նախապատրաստման և պատվաստի տեխնոլոգիան, խնամքի կանոնները:</p>
6. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԾԱՌԵՐԻ ՈՒ ԹՓԵՐԻ ՏՆԿՈՒՄ ԵՎ ԽՆԱՄՔ»		
76.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-006
77.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է սովորողներին այգիներում ծառերի ու թփերի տնկման, խնամքի և ձևավորման հմտություններ տալ:
78.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
79.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում», ՊԳ-Ա-3-14-002 «Այգիներում մշակվող բուսատեսակներ (բուսաբուծություն, ՊԳ-Ա-3-14-003 «Այգու հողերի գյուղատնտեսական մշակում» մոդուլները:
80.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
81.	Ուսումնառության արդյունք 1	Նախապատրաստել հողը ծառերի ու թփերի տնկման համար
82.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է նախապատրաստում այգու հողը, կազմակերպում է պարարտացում հանքային և օրգանական պարարտանյութերով,</p> <p>2) ճիշտ է կատարում հողի վառը, հարթեցումն ու տեղաձևումը՝ պահպանելով օպտիմալ սնման մակերեսը յուրաքանչյուր բուսատեսակի համար:</p>

83.	Ուսումնառության արդյունք 2	Տնկել այգում ծառերն ու թփերը
84.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում այգուն հարմար տնկանյութը՝ ըստ տեղանքի և բուսատեսակի հարմարվելու հնարավորության, 2) ճիշտ է նախապատրաստում տնկիները, թարմացնում է արմատները՝ օգտագործելով համապատասխան նյութեր, 3) ճիշտ է կատարում տնկումը՝ պահպանելով համապատասխան տեխնոլոգիաները, 4) ճիշտ է կատարում ոռոգման առուների տեղաբաշխում և նախնական ոռոգումը:
85.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել ծառերի ու թփերի հետագա խնամքը
86.	Կատարման չափանիշներ	1) կատարում է թեքված ծառերի ուղղում, փայտյա հենակների ամրացում՝ ըստ անհրաժեշտության, 2) ճիշտ է պատրաստում ծառերի բների բաժակները՝ ըստ տարիքային առանձնահատկության:
7. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԾԱՌԵՐԻ ՈՒ ԹՓԵՐԻ ԷՏ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ»		
87.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-007
88.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է այգիներում ծառերի ու թփերի էտի և ձևավորման աշխատանք կատարելու կարողություններ ու հմտություններ ձևավորել:
89.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
90.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում», ՊԳ-Ա-3-14-002 «Այգիներում մշակվող բուսատեսակներ (բուսաբուծություն մոդուլները):
91.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
92.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել ծառերի ու թփերի էտի ու ձևավորման սկզբունքները
93.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում ծառերի և թփերի էտի ու ձևավորման աշխատանքների նպատակը, 2) ճիշտ է բացատրում էտի և ձևավորման դերն ու նշանակությունը այգիների սանիտարական վիճակի

		բարելավման, սաղարթի ձևավորման, վնասատուների դեմ պայքարի, ծառերի նորմալ աճի, պտղաբերության կարգավորման, պարբերականության նվազեցման համար, 3) ճիշտ է տարբերակում շիվը, պտղաբերող օղակը և ճյուղը, 4) ճիշտ է ներկայացնում էտի տեխնոլոգիան և անվտանգության կանոնները:
94.	Ուսումնառության արդյունք 2	էտել և ձևավորել ծառերն ու թփերը՝ ըստ ժամկետների ու եղանակների
95.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում էտի և ձևավորման ժամկետները և դրանք պահպանելու անհրաժեշտությունը, 2) ճիշտ է բացատրում էտի և ձևավորման տարբեր եղանակների յուրահատկությունը և կիրառման դեպքերը, 3) ճիշտ է կատարում էտը և ձևավորումը՝ ըստ ժամկետների, 4) ճիշտ է կատարում էտը և ձևավորումը՝ ըստ տարբեր եղանակների, 5) էտի և ձևավորման ընթացքում պահպանում է անվտանգության կանոնները:
96.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել պտղատու ծառերի էտ և ձևավորում
97.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում պտղատու ծառերի էտի և ձևավորման առանձնահատկությունները, 2) ճիշտ է կատարում հնդավորների էտը և ձևավորումը, 3) ճիշտ է կատարում կորիզավորների էտը և ձևավորումը, 4) ճիշտ է կատարում ընկուզավորների էտը և ձևավորումը, 5) ճիշտ է կատարում հատապտղավորների էտը և ձևավորումը, 6) ճիշտ է կատարում չոր մերձարևադարձայինների էտը և ձևավորումը, 7) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
98.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել դեկորատիվ ծառերի և թփերի սաղարթի ձևավորում
99.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում դեկորատիվ ծառերի և թփերի սաղարթի ձևավորման առանձնահատկությունները, 2) ճիշտ է կատարում ծառերի և թփերի սաղարթի ձևավորումը՝ ըստ ծառատեսակների, 3) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
8. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՅՔԱՐ ԱՅԳՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ»		

100.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-008
101.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ձևավորել այգու ծառերի, թփերի, սիզամարգերի և ծաղկանոցների հիվանդությունները, վնասատուներին և մոլախոտերը ճանաչելու և դրանց դեմ պայքարելու հմտություններ:
102.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
103.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում», ՊԳ-Ա-3-14-002 «Այգիներում մշակվող բուսատեսակներ», ՊԳ-Ա-3-14-003 «Այգու հողերի գյուղատնտեսական մշակում» մոդուլները:
104.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
105.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի տեսակները՝ ըստ նախանշանների և ժամկետների
106.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում այգու ծառերի, թփերի, սիզամարգերի և ծաղկանոցների հիվանդությունները, դրանց առանձնահատկությունները և պայքարի միջոցառումները՝ ըստ նախանշանների, ժամկետների և աճի փուլերի,</p> <p>2) ճիշտ է բացատրում այգու ծառերի, թփերի, սիզամարգերի և ծաղկանոցների վնասատուներին, դրանց առանձնահատկությունները և պայքարի միջոցառումները՝ ըստ նախանշանների, ժամկետների և աճի փուլերի,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում այգու մոլախոտերի տեսակները, դրանց առանձնահատկությունները և պայքարի միջոցառումները՝ ըստ տեսակների և ժամկետների:</p>
107.	Ուսումնառության արդյունք 2	Տարբերակել այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ ինտեգրված մեթոդներով (ագրոտեխնիկական, մեխանիկական, կենսաբանական, կարանտին և քիմիական) պայքարի միջոցառումները

108.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տարբերակում և ներկայացնում այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի ագրոտեխնիկական միջոցառումները, 2) ճիշտ է բացատրում այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի մեխանիկական միջոցառումները, 3) ճիշտ է տարբերակում և ներկայացնում այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի կենսաբանական միջոցառումները, 4) ճիշտ է ներկայացնում այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի կարանտին միջոցառումները, 5) ճիշտ է տարբերակում և բացատրում այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի քիմիական միջոցառումները:
109.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել պտղատու ծառերի և թփերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումներ՝ օգտագործելով պայքարի ինտեգրված մեթոդներ
110.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տարբերակում պտղատու ծառերի հիվանդությունները և վնասատուներին, 2) ճիշտ է կիրառում պտղատու ծառերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցները, 3) ճիշտ է ընտրում բուժանյութերը՝ պահպանելով ժամկետները և ապահովելով բուժանյութերի համատեղելիությունը, 4) ճիշտ է կատարում պտղատուների հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները, 5) ճիշտ է կատարում պտղատուների վնասատուների դեմ պայքարի աշխատանքները, 6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
111.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել դեկորատիվ ծառերի և թփերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումներ՝ օգտագործելով պայքարի ինտեգրված մեթոդներ
112.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տարբերակում դեկորատիվ ծառերի հիվանդությունները և վնասատուներին, 2) ճիշտ է կիրառում դեկորատիվ ծառերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցները, 3) ճիշտ է ընտրում բուժանյութերը՝ պահպանելով ժամկետները և ապահովելով բուժանյութերի

		<p>համատեղելիությունը,</p> <p>4) ճիշտ է կատարում դեկորատիվ ծառերի հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները,</p> <p>5) ճիշտ է կատարում դեկորատիվ ծառերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները,</p> <p>6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
113.	Ուսումնառության արդյունք 5	Կատարել սիզամարգերի և ծաղկանոցների հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ՝ օգտագործելով պայքարի ինտեգրված մեթոդներ
114.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է տարբերակում սիզամարգերի և ծաղկանոցների հիվանդությունները և վնասատուներին,</p> <p>2) ճիշտ է կիրառում սիզամարգերի և ծաղկանոցների հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցները,</p> <p>3) ճիշտ է ընտրում բուժանյութերը՝ պահպանելով ժամկետները և ապահովելով բուժանյութերի համատեղելիությունը,</p> <p>4) ճիշտ է կատարում սիզամարգերի և ծաղկանոցների հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները,</p> <p>5) ճիշտ է կատարում սիզամարգերի և ծաղկանոցների վնասատուների դեմ պայքարի աշխատանքները,</p> <p>6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
115.	Ուսումնառության արդյունք 6	Կազմակերպել այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարը՝ պահպանելով շրջակա միջավայրի, բնական կենսոլորտի, մարդու առողջության պահպանման էկոլոգիական սկզբունքները
116.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում օգտագործվող թունաքիմիկատների չափաբաժինները,</p> <p>2) պահպանում է պայքարի միջոցառումների ժամկետները և պարբերականությունը,</p> <p>3) ճիշտ է ընտրում և օգտագործում սարքավորումներն ու գործիքները,</p> <p>4) ճիշտ է կազմակերպում այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարը:</p>
9. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՅԳՈՒ ԽՆԱՄՔ, ՈՌՈԳՈՒՄ, ՍՆՈՒՑՈՒՄ ԵՎ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ»		
117.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-009
118.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ձևավորել այգու խնամքի, ոռոգման, սնուցման և պարարտացման աշխատանքներ

		կատարելու կարողություններ:
119.	Մոդուլի տևողությունը	30 ժամ
120.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում», ՊԳ-Ա-3-14-002 «Այգիներում մշակվող բուսատեսակներ», ՊԳ-Ա-3-14-003 «Այգու հողերի գյուղատնտեսական մշակում» մոդուլները:
121.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
122.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել այգու խնամքի, ոռոգման, սնուցման և պարարտացման աշխատանքների տեսակները
123.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում այգու խնամքի, ոռոգման, սնուցման և պարարտացման աշխատանքների տեսակները և դրանց առանձնահատկությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում այգու խնամքի, ոռոգման, սնուցման և պարարտացման աշխատանքների տեսակները՝ ըստ տարվա եղանակների,</p> <p>3) ճիշտ է բացատրում երիտասարդ այգու խնամքի, ոռոգման, սնուցման և պարարտացման առանձնահատկությունները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում ծառերի բների խնամքի առանձնահատկությունները՝ կախված վաղ գարնանային կամ ուշ աշնանային ջերմատատանումների առանձնահատկություններից,</p> <p>5) տարբերակում է և ճիշտ է ներկայացնում բնական աղետներից (կարկտահարություն, ցրտահարություն) վնասված ծառերի խնամքի, սնուցման և պարարտացման առանձնահատկությունները:</p>
124.	Ուսումնառության արդյունք 2	Կատարել այգու ծառերի և թփերի խնամքը՝ վեգետացիայի և հանգստի շրջաններում
125.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կատարում ծառերի և թփերի միջբույսային և միջշարային տարածությունների և բաժակների նորոգման, փխրեցման ու մաքրման աշխատանքները,</p> <p>2) ճիշտ է պատրաստում ծառերի բաժակները՝ ըստ ծառատեսակների հասակի,</p> <p>3) ճիշտ է պահպանում բնապահպանական և աշխատանքի անվտանգության կանոնները:</p>

126.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել այգու ոռոգում՝ պահպանելով ըստ բուսատեսակների ջրման նորմաներն ու ռեժիմները
127.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է պահպանում այգու մշակաբույսերի ջրման նորմաներն ու ռեժիմները՝ ըստ բուսատեսակների, 2) ճիշտ է կատարում ոռոգումը՝ օգտագործելով համապատասխան գործիքներ, մեխանիզմներ, 3) ճիշտ է պահպանում բնապահպանական և աշխատանքի անվտանգության կանոնները:
128.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել այգու սնուցում և պարարտացում՝ հաշվի առնելով տվյալ հողի առանձնահատկությունները և մշակաբույսերի պահանջարկը
129.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պարարտանյութերի տարբեր տեսակների նշանակությունը և կիրառությունը, 2) հողատեսակից կախված ճիշտ է ընտրում պարարտանյութերի տեսակները, 3) ճիշտ է որոշում այգու սնուցման և պարարտացման ռեժիմները և չափաքանակները, 4) ճիշտ է որոշում ինտենսիվ սնուցման և պարարտացման անհրաժեշտությունը՝ կախված բույսերի և հողի պահանջարկից, 5) կարողանում է պատրաստել սնուցող խառնուրդներ՝ ըստ հողի և բուսատեսակի պահանջարկի, 6) կատարում է այգու սնուցում և պարարտացում՝ օգտագործելով նաև մեքենայացված սարքավորումներ, 7) ճիշտ է պահպանում բնապահպանական և աշխատանքի անվտանգության կանոնները:
10. ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԵՐՔԱՀԱՎԱՔ ԵՎ ՀԵՏԲԵՔԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»		
130.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-010
131.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ձևավորել մշակաբույսերի բերքահավաքը և հետբերքահավաքային աշխատանքները ճիշտ կազմակերպելու կարողություններ:
132.	Մոդուլի տևողությունը	24 ժամ
133.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում», ՊԳ-Ա-3-14-002 «Այգիներում մշակվող բուսատեսակներ», ՊԳ-Ա-3-14-003 «Այգու հողերի գյուղատնտեսական մշակում», ՊԳ-Ա-3-14-008 «Պայքար այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ» մոդուլները:

134.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
135.	Ուսումնառության արդյունք 1	Ճանաչել պտուղների, հատապտուղների, ծաղկաբույսերի առանձին տեսակների հասունացման նշանները
136.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բերքահավաքի տնտեսական կարևորությունը, 2) ճիշտ է բացատրում բերքահավաքի՝ որպես գյուղատնտեսական աշխատանքների ավարտական փուլի նշանակությունը և անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները, 3) ճիշտ է ներկայացնում պտուղների, հատապտուղների, ծաղկաբույսերի առանձին տեսակների հասունացման ժամկետները, 4) ճանաչում է պտուղների, հատապտուղների, ծաղկաբույսերի առանձին տեսակների հասունացման նշանները:
137.	Ուսումնառության արդյունք 2	Կատարել պտուղների տարբեր տեսակների բերքահավաք և պահեստավորում
138.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում բերքահավաքը՝ պտուղների տարբեր տեսակներին համապատասխան, 2) ճիշտ է ընտրում պտուղների տարբեր տեսակներին համապատասխան տարաները, ճիշտ է տեսակավորում հավաքված բերքը և դասավորում տարաներում, 3) ճիշտ է կազմակերպում պտուղների հետբերքահավաքային աշխատանքները՝ բերքի փաթեթավորումը, տեղափոխումը և պահպանությունը, 4) օրգանական բերքի պահպանությունը կազմակերպում է առանց քիմիական նյութերի և թունաքիմիկատների, 5) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
139.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել հատապտուղների տարբեր տեսակների բերքահավաք և պահեստավորում
140.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում բերքահավաքը՝ հատապտուղների տարբեր տեսակներին համապատասխան, 2) ճիշտ է ընտրում հատապտուղների տարբեր տեսակներին համապատասխան տարաները, ճիշտ է տեսակավորում հավաքված բերքը և դասավորում տարաներում, 3) ճիշտ է կազմակերպում հատապտուղների հետբերքահավաքային աշխատանքները՝ բերքի տեղա-

		փոխումը և պահպանությունը, 4) օրգանական բերքի պահպանությունը կազմակերպում է առանց քիմիական նյութերի և թունա- քիմիկատների, 5) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
141.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել ծաղկաբույսերի տարբեր տեսակների սերմերի, սոխուկների հավաքում, տեսակավորում և պահպանում
142.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է հավաքում, տեսակավորում և պահպանում ծաղկաբույսերի տարբեր տեսակների սերմերը՝ հաշվի առնելով ժամկետները, 2) ճիշտ է հավաքում, տեսակավորում և պահպանում ծաղկաբույսերի տարբեր տեսակների սոխուկները՝ հաշվի առնելով ժամկետները:
11. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ՄԱՔՈՒՐ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ»		
143.	Մոդուլի դասիչը	ՊԳ-Ա-3-14-011
144.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ձևավորել օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվելու, առանց քիմիական նյութերի և հանքային պարատանյութերի էկոլոգիապես մաքուր բուսատեսակներ աճեցնելու հմտություններ:
145.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
146.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՊԳ-Ա-3-14-001 «Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում», ՊԳ-Ա-3-14-002 «Այգիներում մշակվող բուսատեսակներ», ՊԳ-Ա-3-14-003 «Այգու հողերի գյուղատնտեսական մշակում», ՊԳ-Ա-3-14-007 «Ծառերի ու թփերի տնկում և խնամք», ՊԳ-Ա-3-14-008 «Պայքար այգու հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ», ՊԳ-Ա-3-14-009 «Այգու խնամք, ոռոգում, սնուցում և պարարտացում» մոդուլները:
147.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

148.	Ուսումնառության արդյունք 1	Հիմնավորել օրգանական գյուղատնտեսության անհրաժեշտությունը և նպատակները
149.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում «օրգանական գյուղատնտեսություն», «էկոլոգիապես մաքուր կամ օրգանական արտադրանք» հասկացությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում օրգանական գյուղատնտեսության դերը էկոհամակարգերի, հողերի բերրիության և կենսաբազմազանության պահպանության, մարդկանց ու կենդանիների համար անվտանգ կենսամիջավայր և սնունդ ապահովելու, հողի, ջրի և օդի աղտոտման նվազեցման հարցերում:</p>
150.	Ուսումնառության արդյունք 2	Օգտագործել օրգանական գյուղատնտեսության մեջ կիրառվող միջոցները
151.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է պատրաստում բուսական ծագման օրգանական պարարտանյութերը (կենսահումուս, կոմպոստ և այլն),</p> <p>2) ճիշտ է կազմակերպում կանաչ պարարտացումը կամ սիդերացիան,</p> <p>3) ճիշտ է օգտագործում բուսական ծագման օրգանական պարարտանյութերը,</p> <p>4) ճիշտ է մշակում կենդանական ծագման օրգանական պարարտանյութերը (գոմաղբ, թռչնաղբ),</p> <p>5) ճիշտ է հասունացնում կենդանական ծագման օրգանական պարարտանյութերը,</p> <p>6) ճիշտ է օգտագործում կենդանական ծագման օրգանական պարարտանյութերը:</p>
152.	Ուսումնառության արդյունք 3	Կիրառել օրգանական գյուղատնտեսության հիմնական մեթոդներն ու միջոցառումները
153.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ցանքաշրջանառության (տարածության և ժամանակի մեջ մշակաբույսերի հաջորդականության) դերը հողի առողջացման, բերրիացման, վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ պայքարի գործում,</p> <p>2) ճիշտ է կիրառում մոլախոտերի, հիվանդությունների և վնասատուների դեմ ոչ քիմիական միջոցներով պայքարի մեթոդները,</p> <p>3) ճիշտ է կիրառում հողի մշակման տարբեր եղանակները՝ հողի կառուցվածքի բարելավման, հողում խոնավության պահպանման, մոլախոտերի, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի նպատակով,</p> <p>4) ճիշտ է ընտրում բարձր բերքատու, լավ ծլունակություն ունեցող, և դիմացկուն տեսակների սերմերը,</p>

		5) ճիշտ է կազմակերպում ոռոգումը՝ ապահովելով հողի ֆիզիկամեխանիկական և կենսաբանական հատկությունների, մերձհողյա օդի միկրոկլիմայի պահպանումը:
--	--	---

**Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 6-02.10.02 6-02.10.02.01-3
«Պարտեզպուրակային գործ» մասնագիտության «Այգեպան» որակավորման օրինակելի
ուսումնական պլան**

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	Ուսուցման երաշխավորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		27	18	1
3.	Իրավունքի հիմունքներ		54	36	1
4.	Պատմություն		54	36	1
5.	Օտար լեզու		90	60	1
6.	Ֆիզկուլտուրա		75	50	
7.	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		54	36	1
8.	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		489	326	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1.	Հաղորդակցություն		54	36	1
2.	անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
3.	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		54	36	1
4.	Համակարգչային օպերատորություն		54	36	1

	ԸՆԴԱՄԵՆԸ		216	144	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Այգեգործական գործիքների ճանաչում և օգտագործում		54	36	1
2.	Այգիներում մշակվող բուսատեսակներ		54	36	1
3.	Այգու հողերի գյուղատնտեսական մշակում		36	24	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		144	96	
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Կանաչ շինարարություն		81	54	1
2.	Տնկիների աճեցման գործընթացի կազմակերպում		60	40	1
3.	Ծառերի ու թփերի տնկում և խնամք		27	18	1
4.	Ծառերի ու թփերի էտ և ձեվավորում		54	36	1
5.	Պայքար այգու հիվանդությունների, վնասատուների եվ մոլախոտերի դեմ		81	54	1
6.	Այգու խնամք, ոռոգում, սնուցում եվ պարարտացում		45	30	1
7.	Բերքահավաք և հետբերքահավաքային աշխատանքներ		36	24	1
8.	Էկոլոգիական բուսատեսակների աճեցում		27	18	
	ԸՆԴԱՄԵՆԸ		411	274	
	ԸՆՏՐՈՎԻ		81	54	
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		9	6	
	ԸՆԴԱՄԵՆԸ	25	1350	900	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ		100		
	ՊՐԱԿՏԻԿԱ	12			
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ	2			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ	1			
	ԸՆԴԱՄԵՆԸ	40			